

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի էս տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն կամբարատան մէջ:

(Օտարաբարբաղիք գինում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшак“

Կամբարատանը բաց է առաւտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առ զոգոցով):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԿԱՎՈՒԹԻՒՆ

Հայաստանի սովը և էջմիածինը — Ներքին
տեսուչութիւն: Մահմեդականների գաղթակա-
նութիւնը: Նամակ Բագուից, Նամակ Խմբադրին:
Ներքին լուրեր: Արտաքին տեսուչութիւն:
Դեսպանների գրութիւնը: Թիբեթի: Արտաքին
լուրեր: «Մշակի» հեռագիրներ: Յայտարարու-
թիւններ: Գրական գործեր: Նոր գրքեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԸ ԵՒ ԷՋ- ՄԻԱԾԻՆԸ

Ճիշդ այն ժամանակ, երբ մեր
մտքերը լարված էին Հայաստա-
նի վերանորոգութեան ցանկու-
թիւններով, ճիշդ այն ժամանակ,
երբ մեր ազգի բարեմիտները աշ-
խատում էին ազատել Հայ ժողո-
վրդին իր դարևոր թշուառու-
թիւններից և վերջ գնել Թիւր-
քիայի բարբարոսութիւններին, —
յանկարծ վրա հասաւ սովը և
մոռանալ տուեց բոլորը:

Սկսեալ Աւ ծովի եզրերից մին-
չև Վարսից ծոցը, սովատանջ հայր
(հաց) էր ազդակում, (հաց),
միայն «հաց» էր խնդրում: Ա-
մեն տեղ, արևելքից մինչև ար-
ևմուտք, լսելի եղան հայի օրհա-
սական հառաչանքները: Մեր լրա-
գրութիւնը սկսեց եռանդով գոր-
ծել և դէպի ամեն կողմ հրաւեր
կարգալ թէ պէտք է օգնել մեր
եղբայրներին, թէ պէտք է ազա-
տել նրանց կեանքը վերահաս մա-
հից: Անտարբեր չը մնաց և օտա-
րազգի մամուլը, նա էլ սկսեց շար-
ժել ազգերի մարդասիրութիւնը
դէպի Հայաստանի սովեակները:

Ամեն տեղ սկսվեցաւ շեղմ,
շուտափոյթ աշխատութիւն: Հնդ-
կաստանում, Վարսկաստանում
նուիրատուութիւններ հաւարվեցան:
Ռուսաստանի հայր ցոյց տուեց
մի գովիլի օրինակ ազգասիրու-
թեան: Մեր տիկիները յայտնե-
ցին իրանց ազնիւ մայրական ըզ-
զացմունքը դէպի Հայաստանի
զաւակները: Մեղիայի և Ամերի-
կայի մէջ միթիւններ և մաս-

նաժողովներ կազմվեցան հայր
սովեակներին օգնելու համար: Ա-
նտիկի Միսիթարեան արեղանե-
րը հանգանակութիւն հաւարեցին:
Մեր կաթօղիկ և բողոքական
հայերը նոյնպէս չը խնայեցին ի-
րանց նուէրները տառապեալ եղ-
բայրներին օգնելու:

Հարժուր մեծ էր: Ամեն կող-
մից յայտնվեցան կարեկցութեան
և սիրոյ նշմարներ: Հայ ազգը
ցոյց տուեց, թէ և ինքը սիւ-
ված է երկրագնտի ամեն անկիւն-
ներում, բայց սրտով մօտ է Հա-
յաստանին, իսկ հոգով այնտեղ է
բնակվում:

Կ. Պոլսում, սրբազան Պատ-
րիարքի վերահսկողութեան ներքոյ,
կազմվեցաւ մի ընդարձակ յանձ-
նաժողով: Նա սկսեց դէպի ամեն
կողմ յորդորներ կարգալ օժան-
դակութիւն խնդրել, նպաստներ
ընդունել և նրանց բաշխման հա-
մար կարգադրութիւններ սնել:
Նա տարածեց իր գործունէու-
թեան մասնաճիւղերը Հայաստա-
նի ամեն կողմերում և աշխատեց
ազատել սովատանջ ժողովուրդը
վերահաս կորստից:

Բայց ի՞նչ արեց այդ միջոց-
ներում Էջմիածինը — ընդհանուր
հայր Մայր Աթոռը, որի վրա
աւելի մեծ պարտականութիւններ
կային, որից աւելի էր պահանջ-
վում և աւելի էր սպասվում, բան
թէ այն բոլոր գործիչներից, որ
յիշեցինք վերևում:

Էջմիածինը սկզբում անտար-
բեր մնաց և իրան խուլ ձեաց-
րուց, իբր թէ ոչինչ չը գիտէ,
իբր թէ ոչինչ չէ լսում: Երբ
հայր լրագիրները, և մինչև ան-
զամ ուսաց, անդիական, Փրան-
սիական մամուլը գոռում և գո-
չում էին, թէ Հայաստանը կո-
րաւ, թէ շուտով Թիբեթից
բոլոր հայերը կը կոտորվեն սովից,
— այդ ժամանակ Էջմիածնի բե-
րանը «Արարատ» ամսագիրը պահ-
պանում էր մի դիւական լու-
թիւն: Նա մի բառ անգամ չը
տպեց, թէ ինչ էր կատարվում,
Հայաստանում, թէ ինչ պատ-
ճառով կոտորվում էին հայերը:
Ամեն կողմից տրտունջներ բարձ-

րացան: Էջմիածինը մտածեց՝ ին-
չու օգուտ չը քաղել հանգամանք-
ներից, Հայաստանում սով է պա-
տահել, շատ լաւ, մենք էլ սովե-
լոց անունով նուիրատուութիւններ
կը հաւարենք, մենք էլ ցոյց կը
տանք, թէ «գործում էինք»: Այս
մտքով զաւառները թղթեր ու-
ղարկվեցան, որ սովեակների հա-
մար նուիրատուութիւններ հաւար-
վեն:

Մեզ յայտնի է, երբ Էջմիած-
նին փող է հարկաւոր, նա խիստ
եռանդով է սկսում նուիրատու-
թիւններ հաւարելու գործը: Նա
չէ բաւականանում միայն թղթե-
րով այլ իր կողմից ուղարկում է
և բազմաթիւ նուիրակներ: Ճե-
մարանի շինութեան համար հայր
Բաստամեանը անցաւ ամբողջ
Ռուսաստանը և մինչև Վիժնի-
Վոլոգորդի տօնաւաճառը գնաց:
Իսկ ննջարանի շինութեան համար
հայր Ստեփանէն մի և նոյն ճա-
նապարհորդութիւնը կատարեց:
Այսպիսի օրինակներ շատ են
տեսել: Միայն Հայաստանի սո-
վեց համար ոչ մի արեղայ իր
տեղից չը շարժվեցաւ:

Բայց մեր կողմից միամտու-
թիւն կը լինէր մտածել, թէ
Էջմիածնի թղթերը ազդեցու-
թիւն չունեցան և ոչինչ գու-
մար չը հաւարվեցաւ, մանաւանդ,
որ հանգանակութիւնը մի սուրբ
նպատակի համար էր:

Մենք սպասում էինք, որ «Ա-
րարատ» ամսագիրը, որ այնքան
բարի սովորութիւն ունի գովելու,
փառաբանելու և մինչև երկինք
բարձրացնելու Մայր Աթոռի
նուիրատուների անունները, — և
այդ դէպքում կը պահպանէր իր
վաղեմի սովորութիւնը, եթէ ոչ
գովեստներով, գնեւ մի համեստ
ցուցակի մէջ պարբերաբար կը
տպէր սովեց անունով հաւար-
ված փողերի գումարները և նուի-
րատուների անունները: Մենք բա-
պասում էինք, որ «Արարատ» ամ-
սագիրը, որ այնքան ճիշդ հաշուել
գիտէ, թէ որքան փող հաւարվե-
ցաւ տիրացուների համար ժամի
շապիկներ կարել տալու, բանի հատ
կարվեցաւ, և զարձեալ որքան

փող է հարկաւոր, մինչև շապիկ-
ների բոլոր թիւը լսանայ, — մենք
ոչ ունէինք, որ նոյն ամսագիրը
ի միամտութիւն նուիրատուների
մի այսպիսի հաշիւ կը ներկայաց-
նէր, թէ Էջմիածինը որքան փող
ստացաւ սովեց անունով, թէ
այդ փողը որտեղ և ում միջնոր-
դութեամբ ուղարկեց, և թէ դար-
ձեալ որքան փող է հարկաւոր,
որ Հայաստանի հայերը բաղցած
չը մեռնին: Բայց մինչև այսօր
ոչինչ չը տպվեցաւ: Ի՞նչով պէտք
է բացատրել այդ լուսթիւնը:

Գուցէ Էջմիածինը մտա-
ծում է, թէ արդէն անցաւ
սովը, էլ ի՞նչ հարկաւոր է փող
ուղարկել, կը պահենք այդ փողե-
րը մեզ մօտ, նրանցով տոկոսաբեր
թղթեր կը գնենք (այդ թղթե-
րը նա շատ է սիրում), յետոյ
կը մտածենք, թէ ի՞նչ պէտք է
անել նրանց հետ: — Այսպէս վար-
վեցաւ Էջմիածինը և արաչկերոցի
զաղթականների անունով հաւար-
ված 17000 ռուբլու հետ, փոխա-
նակ մերկ, բաղցած և հիւանդ
արաչկերոցիներին խնամք տանե-
լու, նա գնեց յիշեալ գումարով
տոկոսաբեր թղթեր: Մենք հա-
ւատացած ենք, եթէ այդ գու-
մարը, նուիրատուների նպատակի
համեմատ, իր ժամանակին գործ
զրկած լինէր, արաչկերոցիների
3000 ընտանիքից կէսը չէր կո-
տորվի:

Հայաստանի սովը դեռ չէ ան-
ցել, նա սպասվում է և զալոց
տարին: Թող Էջմիածինը վերջա-
պէս հասկանայ, որ սովեց անու-
նով իր հաւարած իւրաքանչիւր
րուբլին մի հայ կեանք է բովան-
դակում իր մէջ: — Այդ կեանքը
գուցէ Էջմիածնի համար նանակու-
թիւն չունի, բայց խիստ թանկ է
մեզ համար: Թող Էջմիածինը
շտապէ շուտով ուղարկել Կ. Պոլսի
յանձնաժողովին իր մօտ գտնված
գումարները: Սովը համբերութիւն
չունի, սովատանջը սպասել չը գի-
տէ: Ամեն մարդ ուղարկեց իր
հաւարածը և օրինաւոր հաշիւ
տուեց հասարակութեանը: Գուր
ևս օրինակ առէք զրանցից, —
դուք, սրբազան հայեր, որ պի-

տի աշխատէիք բարի օրինակ տալ միւսներին...

Յ. Մ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՀՄԵՏԱՎԱՆՆԵՐԻ ԳԱՂՔԱՎԱՆՈՒԹԻՒՆԸ

Ռուսաց զէնքով նոր նուաճված մեր (Ալեքսանդր) զարգացող քաղաքները դարձնելով պատրաստվում է զաղթելու, չը նայելով որ նրանցից մեծ մասը արդէն անցեալ տարուանց զաղթել պիտի է: Նարձեական և անշարժ կայքեր ծախում են նրանք չնչին գներով: Մի տարօրինակ շտապողութիւն մի անսպասելի հաստատմանութիւն է նշմարվում այդ նշաւակ մտնողների գաղթելու նախապատրաստութիւնների մէջ: Սրանց էլ արդեօք չեն զաղթել տալիս իրանց բնիկ երկրից և քլում Հայաստանի խորքերը այդ երկրի ժառանգական տարրի համար նոր ցեղեր պատրաստելու դիտաւորութեամբ: Դժվար է չը նախատեսել այս գաղթականութեան մէջ մի քաղաքական դժոխային նպատակ: Անտարակցայ տաճիկ կառավարութեան ազնուններ պէտք է գործելիս լինեն այս տեղերում անդուլ օր և գիշեր: Նրանք չեն արդեօք որ արժարժում են նրանց մէջ անդադար մոլորանդութեան զգայունները, որ բորբոքում են նրանց մէջ մի ատելութեան զգացմունք դէպի մի օտար պետութեան հրապարակութիւն, որ մեծամեծ խտտումներով շրջանում և հրապարակում են մահաբերական տարրը դէպի Հայաստան... Նրեւում է որ այնտեղի երկրագործ հայերի ձեռքից լուրջ բերրի և արգաւանդ հողեր, տալիս են նոր գաղթած տաճիկներին: Թէ չէ, ինչ կերպ մեկնել այս երկրից, որ թշուառական և թուլամորթ տաճիկը բացայայտ տեսնելով ահարկու սովը, այդ սովամահ մեռնելու սպառնալիքը իր աչքերի առջ, վճռում է չնչին գներով ծախել իր ունեցած բոլոր գույքը և գաղթում է այն տեղերը, ուր տիրում է սովը:

Ցիրուցան անել հայկական տարրը և բոլոր Հայաստանը լքցնել միայն մահաբերական ստուար ազգաբնակչութեամբ, — ահա՛ տաճիկացի ներկայ քաղաքականութեան միակ դէպքը Հայաստանի վերաբերութեամբ: Այս նենդաւոր և արիւնկալ քաղաքականութեան մէջ դարձնել պէտք է փնտռել և մեր կողմերի գաղթականութեան ամենազլխաւոր շարժառիթը:

Ա.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԾ

4 յունիսի

Պ. Ալեքսանդր Մովսէսեանց, «Մշակի» 86 համարում տպված նամակում դուք քանի մի սաստիկ սխալ և ձեր ուժից վեր դատողութիւն էք անում իմ վրա առանց որ և ինչ փաստի վրա հիմնվելու: Գուցէ պահանջում էք քեզ աւելի յարմար տեսուչ ունենալ, գոնէ հայերէն խօսելի գիտենար, իմ գրաւոր աշխատանքները կարող էք կարդալ 1865 և 1866 թ. «Մեղու Հայաստանի» լրագրում, որոնց մեծ մասը կրթութեան և դատարարականութեան վրա է, իսկ միւս մասը շտապակցութեան սովորութիւնների, աւանդութիւնների, անպատշաճութիւնների և առաւելների. մի քանի յօդուածներ, որպէս «Երանդութիւնը հաշակաւոր պետադպրոցների հին և նոր դարերու ստորագրված են ազգանունով», միւսները որը աշակերտացս, որը Բարտաշ և կամ Բարձրերուի ստորագրութեամբ: Ես ոչ թէ 1400 բուրբի եմ ստանում, այլ 1000 բուրբ, որից միայն 900 է ինձ հասնում, իսկ 100ը ուժեղացնում է «Մարդաս. ընկերութեան» խոր-

հուրը անփոփոխ անգամ լինելու համար: Գալով ձեր դիտումը սխալված 400 բուրբում, սովորված եմ կրկին ձեզ, որ ա. դատաւան բարձր բաժանման մէջ հարկաւոր էր շարժական 9 դաս ուսուցչական և թուլաբանութեան. սոցա համար հրաւիրեցի տեղադրելով անուանաբանի հայազգի ուսուցչի պ. Պօպովին, որը սկզբումը յանձն առաւ այդ դասերը ամսական 35 բուրբով, եթէ արձակուրդին էլ ստանայ այդ ուժերը: Խորհուրդը և ես համաձայնեցինք նրա պայմանին. բայց նա ի վերջոյ կարողացաւ հրաժարվել դրանից, պատճառ բերելով թէ անցեալ տարի ընկերութեան հոգաբարձուները մի քանի օր մնացած արձակուրդին հեռացրին նրան իր պաշտօնից առ ի գրկելով արձակուրդի հասանելու ուժեղացումը: Վասն որոյ չունենալով ի նկատի մի որ և ինչ անձը, որ բացի հայոց և ուսուցչական գիտենալուց լինէր և հմուտ ուսուցիչ, ես ստիպված էի թէ կուրծքիս հիւանդութիւնը ինձ նեղում էր, յանձն առնել այդ դասերը, որ դատաւանը չը զրկվի այդ առարկաներից: Իսկ ինչ կը վերաբերի իմ անանկալարժեքան թերութիւններին, այդ մասին կարող եմ ասել, պ. Մովսէսեանց, որ դա ձեր խելքի բանը չէ. ըստ որում դուք դեռ դուրի էք այն տարրական գիտութիւններից, որ կարողանաք հանգէս դուրս գալ գրականական սուրբ ասպարէզի մէջ: Թէ ես ինչ եղանակով եմ դաս տուած, ինչպէս եմ վարված աշակերտաց հետ, կամ ինչ յառաջդիմութիւն եմ արած նորա իմ ասանկած ուսանց մէջ, այդ թողնում եմ աշակերտների ճիշտութեանը և դատողութեանը, որոնցից տեսուչ և ուսուցիչներ, աստիճանաւորներ և վաճառականներ կան, որոնց դեռ 1861, 1862 թ. զբաղեցնում էի թարգմանութեամբ Գրուբէի թուրքալեզուութեանից, Սոկրատի սրբազան պատմութեանից, և այլն. այս գրքերից առաջինը լայն տեսուչ ուսանողներին աշխատանքութեամբ ութ տարից յետոյ միայն:

Մարդասիրական ընկերութեան խորհուրդը հրաւիրելով տեսուչ պ. թիւրքալեզուին, խոստացել էր 1200 բուրբ տալ տարեկան վարձ, տուն, ծառայ և փայտ, իսկ եթէ պ. թիւրքալեզու կամենայ իր համար առանձին սենեակ վարձել, այն ժամանակ խորհուրդը պարտ էր աւելացնել այդ գումարի վրա եւ 300 բուրբ: Պ. թիւրքալեզու ընկերութեան տանը իջնանեց, ստանալով ծառայ և փայտ: Բաղդի բերմամբ ընդհանուր ժողովին այդ պայմանները չը յայտնվեց, ուստի ժողովը վաւերացրեց անդամների կարողութիւնը տալ 1500 բուրբ և ճանապարհի ծախս թիւրքալեզուի բազու: Ասում են պ. թիւրքալեզու եօթը ամսուս տեսուչութեան համար ստացած է 1700 բուրբ: Արդեօք պ. թիւրքալեզու ինչը չը կամեցաւ շարունակել իր պաշտօնը Բազուում, թէ խորհրդի անդամները կամեցան ունենալ մի ուրիշ տեսուչ, այդ ինձ անայտ է. միայն խորհրդի անդամներն այն եղբակցութեան կէտի վրա կանգ առան, թէ լաւ է չարեաց փորձադրելը ընտրել, վասն որոյ հրաւիրեցին ինձ. իսկ իմ բացակայութեան ժամանակ յանձն առաւ կատարել տեսուչ պաշտօնը խորհրդի անդամ, համալսարանում աւարտած պ. Խ. Անտոնեանցը: Բացի պ. Անտոնեանցից տեղադր արժանապարհ աւագ-քահանայ Թաղեան Բուրդաղեանցը, որ նախագահ է ուսումնարանի հոգաբարձութեան միջոց այցելած է ուսումնարանը թէ բացակայութեանս և թէ ներկայ գտնված ժամանակ և ըստ իր չափու կարողութեան նա զլացած չէ օգնել թէ ուսուցչական կառավարութեանը և թէ ուսումնարանի պիտոյքները հայթայթելուն: Այսպիսի պայմանների մէջ գտնված ուսումնարանը ինչ կարող էր կորցնել երեք շաբաթ բացակայութեանս ժամանակ, երբ իմ դասերս բաժանված էին ուսուցչաց վրա: Պ. Մովսէսեանց. ձեր կարողացած ողբը, թէ ես եմ յանձնել ուսումնարանի տեսուչութիւնը ինձ անհասկանալի է. ճշմարտ, դժուարանում եմ մի որ և ինչ բացատրութիւն տալ այդ մտքին: Բայց ես շտապում եմ ձեզ յայտնել պ. Մովսէսեանց, որը կարող էք ձեզ սովորեցնող թաթոններին էլ հաւատացնել, որ ես նրա արժանի եմ ասալիկ սեպտեմբերից տեսուչ լինելուց, նախ որ իմ կուրծքիս տկարութիւնը ինձ չէ ներում շարունակել այդ պաշտօնը, որի համար յայտնած եմ չորս ամիս առաջ խորհրդի անդամներից մէկին, երկրորդն որ և զլխաւորն է, այնպիսի կարգաւորութեան մէջ, որպէս է երկուսն ա զարդոցի վարչութիւնը, ունենալով ի նկատի ժողովրդի աստիկ անտարբերութիւնը դէպի իր ազգային ուսումնարանը, որ ամեն ժամանակ կարող է խաղաղը դառնալ, եթէ այս կամ այն ազան կամենար միայն, ուր հաստն ու բարակը մի գին ունէ, դժուար է իր պարտքը ճանաչող անձին ծառայել:

Պ. Մովսէսեանց, ես մի և նոյն անձն եմ, որի

վրա անցեալ տարի «Մշակ» լրագրում մեծ յոյս էիք յայտնում, թէ կարող եմ ես, եթէ յանձն առնեմ, գրադարան բնաւ Բազուի մէջ: Ինչ եղաւ այժմ: Հարցը կը պարզուի, եթէ ասնք, որ ձեր վերջին շանթերը մի կտոր հացի խնդրի համար է, և ոչ թէ համադրուելի կամ որ և ինչ իդէալի արտայայտութիւն և հնարք զոր գրվեց և որպիսի խոչընդոտների պէտք էր դիմադրվել, որ գրատունը բացվել էր. ձեզ գրագահ ընտրեցինք, բայց որովհետև ոչինչ չը պիտի էր, հրաւիրեցի ուսուցիչներին ձեզ օգնելու: Ինքս ամբողջ երկու ամիս օրերով ձեզ ցոյց կը տայի կարգապահութեան կանոնները, կը ջանայի հասկացնել այս և այն արած պակասութիւնները, բայց էլի կը տեսնէի, որ կամ գրքերը բարձի թողած են, կամ նոցա համարները ջնջած են նորէն գրած, մի խօսքով բոլոր անհոգութեանը համբերում էի ձեզ օգնելու նպատակաւ: Բայց ո՞վ էր մեղաւոր, պարոն, որ դուք ինչ և քրնջ չէիք զանազանում: Ի վերջոյ ո՞վ է մեղաւոր, որ ձեզ այր ձակեցին և այժման գրագահին նշանակեցին:

Մինչև ցայժմ ձեր գրված յօդուածները չեն պտուղ հատաւոր համոզմունք կամ խորին դատողութեան, այլ միշտ գրած էք այն ժամանակ, երբ ձեզ հարկաւոր է մէկին կծելու, վաճառող մի երկու միտք յայտնելով սկզբում առանց կապի, իսկոյն դիմում էք դէպի այն զօր, որին դիտաւորութիւն ունէք շանթելու, յօդուածի մտքերն էլ, ներքեք ինձ ասել, վեր էք առնում սորա կամ նրա խօսակցութիւնից: Անցեալ տարի «Մշակ»-ում տպված էին մի քանի մտքեր, որ շատերը կարծում էին թէ ես եմ գրած այն նամակը. հարկաւոր է ասած և այն, որ ինչ որ գրում էք, նա ևս շատ անգամ պէտք է կրկնված լինի, որ կարողանաք արտայայտել օրինակի համար այդ 86 համարում յայտնած արհեստարանի կրթողական նշանակութեան մասին, որ խոսում էք, դա երկու տարվայ առաջ ասված և խօսված մտքերն են, որ կրկին յարուցվեցան անցեալ սեպտեմբեր ամսին: Այդ մտքի իրագործութեան համար, հայտնելով որ 60 աշակերտներ պէտք է ուսանեն, ուսումն աւարտելուց յետոյ, կէսօրիններին զանազան արհեստներով հարկաւոր էր 500 բուրբ, որ ուսումնարանի մէջ բացած արհեստանոցի ամենակարեւոր կարասիները հայթայթվին: Մարդասիրական ընկերութեան խորհուրդը թէ և այդպիսի արհեստանոցի անհրաժեշտ կարոտութիւնը գիտէ և վարուց դուրս հօգու մէջ է, այնու ամենայնիւ նա յետագից դուրս իր եկամտի սղութեան պատճառով, այս ամենը նոր է հասունանում ձեր մտքում, պ. Մովսէսեանց: Բացի դրանից, երկու տարի է, որ ինձ ճանաչում էք, պարոն, բայց այնքան թույլ էք մտքով, որ մինչև ցայժմ մոռանում էք իմ պաշտօն ուղիղ գրել. ես ոչ թէ գիրեկտոր եմ, այլ նորա օգնական եմ. առաջ ունէք, որ կարողանաք ուսուցանել:

Եթէ ողջամտ մարդ լինէիք, պ. Մովսէսեանց դուք շատ բան կը տեսնէիք և կը նկատէիք, որ այս կարծ միջոցում, համեմատելով անցեալ տարիների հետ, երկուսն ուսումնարաններին վերաբերեալ շատ հարցեր վճռված են, շատերին էլ ընթացք է տուած, բայց դոցա իրագործվելու համար հարկաւոր են բարեշուքը հանգամանքներ: Ի վերջո պարտ եմ համարում յայտնել ձեզ, որ այսուհետեւ ձեր բոլոր գրուածները դէմ պատասխան կը լինի իմ խորհին և ստան արհամարհանքը:

Բ. Ստեփանեանց

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐԻՆ

Ալեքսանդրապոլ, 13 յունիսի

Ձեր լրագրի ներկայ թիւ 92-րդ համար ներքին լուրերի բաժնում տպագրված էր Ալեքսանդրապոլից հաղորդված մի լուր, ուր պ. լրատուն յիշել էր ճարտեսների սրճանոցում յօդուած «Կարողութեան» ընկերութեան հաւաքված 40 բուրբին և «Արարատեան» ընկերութեան օգտին հաւաքված 50 բուրբին իրանց նպատակներին ջր ծառայեցնելու, այդ գումարները դեռ ևս տեղ չը հասցնելու առթիւ, և ուր բացատրութիւն էր պահանջում այդ գումարները ստացող երիտասարդներին: Կարողալով այս լուրը տեղոյս մի սյայանի շրջանի անդամներ չը գիտեմ ինչ բարի զգացմունքից դրված, (այդ միայն իրանց է յայտնի) հաստատապէս կարծում եմ, այստեղ ու այնտեղ տարածում և ուրիշներին էլ աշխատանք անպատճառ այնպէս համոզել — իբր այդ լուրը ես եմ հաղորդել «Մշակին»:

Հարկաւոր համարելով լրագրութեան միջոցաւ, տպագրական խօսքով ցրել պարոնների կոյր և սղխալ կարծիքը, խնդրում եմ ձեզ, մեծ խմբագիր, որ այս կարճատեւ հերքման տպագրութեամբ

աւնկայանի ապացուցանէք պարոններին՝ որ այդ րատուն ես չեմ, որ չունենալով ձիշտ տեղեկութիւն իրանց մասնաւոր շրջանում հաւաքած նուիրատուութիւնների մասին, պարզ բան է, որ չէի կարող հաղորդել ես այդ լուրը: Այս միայն հաստատապէս գիտեմ, որ սրանից մտաւորապէս մի ամիս առաջ, պ. Յովսէսեանց Բաբաջանեանցը օրագրից իրան յանձնված նուիրատուութեան գումարը (40 կամ 41 բ. 19 կ.) քանակութեամբ ձեր խմբագրութեանը, չեմ յիշում վառայ սովատանջների թէ «Արարատեան» ընկերութեան հասցնելու համար:

Ա. Ալիբիկեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նորերումս մեք աւելի ունեցանք տեսնել Արժրուում գալլէրուում, պ. Շանչիբի կանտորապետ մի նոր շարժող մեքենայ (շոկօմօրի), որ բանում է առանց շոգու, միայն տաքացրած օդի միջոցով: Մեքենան զորս մարդու ոյժ ունի և շատ յարմար է մանր արուեստների համար. բայց մանաւանդ տպարանի մէջ արագատիպ մեքենայ շարժելու համար: Այդ մեքենան արժէ, որքան իմացանք, 800 բուրբ, բայց կան այդ մեքենայի և աւելի մեծերը խորհուրդ ենք տալիս թիֆլիսցիներին տեսնել այդ մեքենան:

Յունիսի 15-ին, առաւօտեան, Հաւաքարի դօրանոցից ցած, որ գտնվում է կուր գետի ֆիւսիսային ժայռի բարձրութեան վրա, իջնում է լաւ հագնված մի մարդ, իր գլխարկը և գաւազանը դնում է քարի վրա և երեք անգամ խաչակնքվելուց յետոյ, ընկնում է գետը: Նաւապարները, որոնք հեռուից տեսնում են, կամենում են օգնել, բայց ուշ են հասնում: Պատմում են, որ զլխարկում մի գրուած թուղթ է եղել:

Ան այս երրորդ անգամ է, որ թիֆլիսի Բօտանիկական այգուց վերեւ, ձորում, կիրակի երեկոյն հաւաքվում են տեղիս բազմաթիւ երիտասարդները (պատարիները) և սկսում են միմեանց հետ կուրել: Այս կիրակի, ամիս 15-ին, մի քանիսի գուլիները պատուական և ոմանց քիթը և այլ անդամները ջարդվեցան: Պօլիցիական վարչութիւնը դեռ մինչև այժմ ոչինչ կանոնաւոր միջոցներ չէ գործ դրել այս շարքի առաջն առնելու, որին գուցէ անայտ էլ լինի:

Այս օրերում, ԹԻՖԼԻՍԻ «Շապի» զիւրջ անուանված թաղում մէկի տուն գիշերով մտնում են հինգ թուրքեր: Նրանցից մի քանիսը բռնում են տանտիրոջը մարդուն, իսկ միւսները բռնաբարում են նրա կնոջը:

ՇՈՒՇՈՒՑ մեղ գրում են, որ այս օրերս փորձ էին փորձել գիշերով Անանեանցի թիֆլի գալիջը կրակ տալ: Թախտափուկի չորս կողմից դրել էին կաւթով թաթխված չորեր և կրակ տուել, բայց բարեխախտաբար շուտով իմացվելով, յաջողել էին հանգցնել կրակը:

Մեղ գրում են ՇՈՒՇՈՒՑ, որ թէ և եղանակը ժայիս ամսին լաւ անցկացաւ, բայց յունիսից ըսկսած անձրևները և կարկուտը մի քանի տեղ բաւական վնասեցին այս տարվան առատ ցորենի արտոներին:

Եկող շրթերաթի օրից կը սկսենք տպագրել «Մշակի» մէջ Գրիգոր Արժրուում «Սովը» Հայաստանի մէջ յօդուածը, որ հեղինակը պէտք է կարդար, որպէս հրապարակական դասախօսութիւն:

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՎՈՒՄՑ մեղ հաղորդում են, «Արատահոս անձրևները և արտօրայքի ձոխ բուսականութիւնը խոտտանում են այս տարի ցորենի մի առատ բերքը: Յաւայի է միայն, որ այս տարվայ ցանքը անցեալ տարվայ ցանքի հետ համեմատելով շատ քիչ է: Կան այնպիսի գիւղեր, ուր շատ տներ ամենին չեն սերմանած, սերմացու հացահատիկներ չունենալու պատճառաւ: Սակայն յուսալի է, որ չսփառանց առատութիւնը լցնել պակասորդի տեղը: Չը նայելով որ հիմա ամեն

տեղերից բերում են և անպակաս է ալիւրը քաղաքում, այնու ամենայնիւ ալիւրի գինը ամենին չէ պակասում 3 ր. 60 կոպէկից պուրը: Այս աւարի հէնց դարձան սկզբից մտակալ գիւղերից շատ մուրացկաններ թափվեցին քաղաքում: Քաղաքի աղքատներն էլ խառնվելով սրանց հետ բազմապատկեցին նոցա թիւը: Այս մուրացկանները մի մասն էլ կազմում են ճանկա-Հայաստանից եկած թշուառ սովառանջները: Այս վերջինների մէջ կան քրիւղ, դպրի և ատորի մուրացկաններ էլ: Ինչ և ինչ մեր քաղաքի փողոցները բաւականին բազմա-մարդ են դարձել մուրացկաններով:»

Նոյն տեղից մեզ գրում են, «ԵՏԵՂՈՅ ԱՍՏՈՒՆԱԾԻՆՆԱ փայտածածկ եկեղեցին բոլորովն հնարացած վիճակով, մտք օրերումս քանդեցին և շուտով կը սկսեն շինել միևնոյն տեղում նոր եկեղեցի: Շատ զովելի է պ. պ. հոգատարն րի դիտաւորութիւնը: Եթէ մի երկու տարի էլ յետաձգվեր այս շինութիւնը, եկեղեցու ծածքը անշուշտ մի օր փուկ կը դար ժողովրդի գլխին: Ուսումնարանի շինութիւնը նոյնպէս առաջ է գնում յաջող կերպիւ:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՍՊԱՆՆԵՐԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ

Կ. Պոլսից «Polit. Corresp.» լրագրին գրում են յունիսի 15-ից:

Այս շաբաթվայ նշանաւոր անցքը այն էր, որ շաբաթ օր, յունիսի 12-ին, դեսպանները յանձնեցին Բ. Կրանը իրանց ընդհանուր զըրութիւնը: Նա վերջնականապէս խմբագրվեցաւ յունիսի 10-ին դեսպանների խորհուրդի ժամանակ: Գրութիւնը յանձնելու օրը դեսպանները պէտք է այցելէին նորընտիր մի-նիստրներին: Այդ պաշտօնական այցելութիւնից յետոյ արտաքին գործերի մինիստր Արեղդին-փաշային ներկայացան դեսպանների թարգմանները: Յանձնված գրութիւնը վեց օրինակ է և մի և նոյն բովանդակութիւնն ունի: Գրութեան օրինակների յանձնելու ժամանակ բոլոր թարգմանները յայտնեցին, որ եթէ նրանց մէջ որ և է զանազանութիւն լինի, դա արտագրողի մեղաւորութիւնը կը լինի, որովհետեւ դեսպանների նպատակների համեմատ բոլոր վեց օրինակները միանման պէտք է լինեն: Փարզանների և դեսպանների վրա Արեղդին-փաշա լաւ տպաւորութիւն չը գործեց:

Գրութեան վեց օրինակների յանձնելը նրան շփոթեցրեց: Կրեւ մինիստր Արեղդին-փաշա անփորձ է և ծանօթ չէ իր բաժնի կարգերի և աւանդութիւնների հետ: Ասում են, որ նրա ընկեր կը նշանակվի ազգով Հայ Արաբի-Կաղան: (Նորբունս ստացված տեղեկութիւնների համեմատ այդ նշանակութիւնը արդէն կայացել է: Արաբի-Կաղան Մահ-մուղ-Նեղիս-փաշայի ժամանակ մինիստրի օգնականի պաշտօն էր վարում և մինչ և այժմ նրա հովանաւորութեան տակ է: Արեղդին-փաշա, որ սուլթանի կամքով է մինիստր ընտրված, բոլորովն համապատասխանում է գործերի այժմեան գրութեանը: Կրեւ արտաքին գործերի մինիստր նա պարտաւոր է Ալբանիայի ամբողջութիւնը պաշտպանել Յունաստանի, մինչև անգամ Յուրպայի դէմ և գործադրել իր բոլոր աղիւցութիւնը այբանջիների գլխի, որպէս զի նրանք ուրիշ անդ օգնութիւն չը փնտսեն և օտարազգի իշխան չընտրեն: Այս յանձնարարութիւնը նրանից լաւ ոչ ոք չէ կարող կատարել: Կեսպանները Բ. Կրանը 20 օր ժամանակ են սուր իրանց գրութեանը պատասխանելու համար, հասանալիս է, որ պատասխանը այդ ժամանակամիջոցից աւելի շուտ կը տրվի: Կարգանքի ներքին ներքինը մի քանի հարիւր թիւղանութածիներ են ուղարկված և թիւրք լրագրի-ները հասկացրին, որ այդ կտրագործիւնը

օտար նաւատորմներին ընդդիմանալու նպատակով է արված: Մի և նոյն ժամանակ Կ. Պոլսի զորքերի թիւը շատացրած է 55,000 ամենալաւ և փորձված զորքերով: Նրանցից շատերը այբանջիներ են:

ԹԻՒՐԿԻԱ

Բոլոր եւրոպական լրագիրները շարունակում են խօսել եւրոպական պետութիւններից Բ. Կրանը ներկայացրած համաձայն գրութեան մասին: Խօսելով հայոց խնդրի մասին, Ֆրանսիական «Temps» լրագիրը ասում է, «Հայոց խնդիրը յարուցանելով, մենք մտնում ենք այն դժուարութիւնների սիրտը, որոնք ընդհանուր կապ ունեն թիւրքիայի գրութեան հետ: Թէև հայերի թշուառութիւնը սաստկացրած է քրիւղերի բռնութիւններով, բայց նրանց դրութիւնը բարեղբու համար պահանջող կառավարչական ձևը, չէ զանազանվում այն քաղաքական պայմաններից, որոնց անհրաժեշտ կը լինէր իրագործել թրակիայում, Մակեդոնիայում, Թէսալիայում և Կիլիկիայում: Ոչ մի տեղ թիւրքիայում կանքը և կայքը ապահոված չէ կամայականութիւնից: Առհասարակ երեք բան է հարկաւոր թիւրքիայի բոլոր նահանգներում. ժամադրմանի գործը, կարգը պահպանելու համար, դատարաններ, արդարադատութիւն անելու համար և կանոնաւոր հարկահանութիւն եղած կամայականութեան տեղ: Բայց այդ բոլոր վերանորոգութիւնները կարող են իրագործվել երբ իրականութիւն կը ստանան զաւանակական լուսաւորված ինքնավարութիւնները: Իսկ այս վերջինը միտք չունի առանց կենտրոնական իշխանութեան, զահի պատասխանատուութեան, փոխանակ մինչև այժմ արիւթաւոր կամայականութեան և բռնաւորութեան: Մենք դեռ չենք խօսում այն բանի վրա, որ ամբողջ Ֆրանսիական սիստեմը պէտք է վերանորոգվի, պէտք է աշխատել բարձրացնել թիւրքիայի Ֆրանսիական գրութիւնը եւրոպական կապիտալների միջոցով:»

«ԵՏԵՂՈՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ»-ը ասում է, «Կ. Պոլսից հետեւալը. «Օտար պետութիւնների դեսպանները խորհուրդ ունեցան, որի ժամանակ վճռվեցաւ չը պատասխանել Բ. Կրան հարցադրութեանը թիւրք-յունական սահմանների վերաբերութեամբ այն հիման վրա, որ այդ հարցը Բերլինի կոնֆերանցիան պիտի վճռի: Բ. Կրանը այժմ զբաղված է պատասխան պատրաստելով պետութիւնների միջանց գրութեան այն մասին, որ վերաբերվում է Չերնոգորիայի և Հայաստանի հարցերին: Կարծում են, որ Բ. Կրան արած առաջարկութիւնները այդ հարցերի վերաբերութեամբ բաւականացուցիչ բնաւորութիւն կունենան:»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսից հարցողում են լրագիրներին, որ այդտեղ լուրեր են ստացված Հայաստանից, որ քրիւղերը նորից բռնութիւններ են գործում հայ ժողովրդի վրա, բայց տեղական կառավարութիւնը անհոգ է այդ մասին և չէ զսպում հարստահարող քրիւղերին:

Կ. Պոլսից հարցողում են, որ յունիսի 15-ին Կիւրբեք-բերի մէջ թէ հայ և թէ մահմետական սոված ժողովուրդը 3000 թուով, յարձակվեցաւ հացի պետական ամբարների վրա և ոչնչացրեց այդ պահեստները: Զորքը վերականգնեցրեց կարգը և քանի չափ մարդիկ սպանվեցան:

Յարութիւն բէյ Կաղան նշանակված է թիւրքաց արտաքին գործերի մինիստրի օգնական, Վերջին ժամանակները նա շատ էր աշխատում սերտ յարաբերութիւններ հաստատել թիւրք մինիստրութեան և Գոչէնի մէջ: Հայ լրագրով Յարութիւն Կաղան իրան նպատակ է դրել նուիրվել Հայաստանի ռեֆորմների խնդրին:

«Temps» լրագրում կարդում ենք, որ յունիսի 7-ին Ֆրանսիական պատգամաւորների ժողովի մէջ Լուի Լըգրան պատգամաւորը խնդիր յարուցեց Ֆրանսիական քաղաքականութեան մասին արեւելքում: Նա ասեց, որ Ֆրանսիան մինչև այժմ արեւելքը քաղաքականութեան էր հետեւում պաշտպանելով արեւելքում միմյալին հայ-կաթոլիկներին առանց ուշադրութեան թողնելով հայ-գրիգորեաններին: Լըգրանի կարծիքով Ֆրանսիան անխորհրդաբար է պաշտպանի բոլոր դաւանութիւնների հայերին: «Temps» լրագիրը համարում է այդ մտքին, և հնարաւոր է գտնում այդ տեսակ պաշտպանութիւն Հայաստանի վերաբերութեամբ, սակայն Սիրիայի վերաբերութեամբ անհնարին է գտնում:

ՄԾԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԳՈՒՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՅՈՒՐԳ, 18 յունիսի: Փաղաժառանգուհուն տուած է հետեւեալ Բարձրագոյն հրովարտալը. Ձերդ Կայսերական Բարձրութիւն, 1876 թուին հրատարակված 155, 299, 300, 301, 303 և 176 յօդուածների հիման վրա հաստատված է շքանշանների կանոնադրութիւն: Աստուծոյ կամքով վախճանված մեր սիրելի ամուսին Կայսերուհի Մարիա Սլէքսանդրովնայի մահից յետոյ բազմաչաքար սուրբ Եկատրինայի շքանշաններ և նրանց մասին հրովարտական ընձույժը Ձեր Կայսերական Բարձրութեանն ենք յանձնում: Կարմիր խաչի շքանշանների և նրանց մասին հրովարտական բաժանելը Մեր թոյլտուութեամբ այդ նշանի մասին 1878 թ. փետրվարի հրատարակված կանոնադրութեան հիման վրա նոյնպէս յանձնում ենք Ձեր Կայսերական Բարձրութեանը: Իսկականի վրա նորին Մեծութիւն Կայսրի սեփական ձեռքով զբված է Ալէքսանդր:

Փ.ՌԻՉ, 17 յունիսի: Կոնստանդնուպոլիսի կատարաւ ներումն շնորհելու օրէնքի նախագծի վիճակը վերջնականապէս ապահոված է: Թէ սենատի բերօններ և թէ նրանց ընտրած մասնագործների կողմակիցութիւնը այնպէս է, որ այդ օրէնքի ընդունելը կատարածաւոր է երևում: Միարանութիւնները կառավարութիւնից դեռ ևս հրամաններ չեն ստացել: Այնու ամենայնիւ նրանք իրանց հիմնարկութիւնները դատարկելու համար անհրաժեշտ պատրաստութիւններ արել են, թէպէտ վճռած է այնքան ընդդիմանալ, որ կարողանան զանգառով պօլիցիայի կողմից իրանց բնակարանների վրա ուժով յարձակվելու վրա: Եզուիանների միաբանութեան ուսումնականից հայր Կազարին ուղեորվեցաւ Եվէյցարիա, Պրիլիւք Իտալիա: Այս վերջինը մեր դեսպանատան միջոցով պիտի իրան այցելել Ռուսաստանը: Հայր Մարտինոյ դեռ մնում է Փարիզում rue des sevres փողոցում զանված եզուիտական տանը: «ՊՕՍՕՅ» լրագրի թղթակիցը գրում է: Իսկոյն ևս ներկայ էի rue des sevres փողոցի վրա եղած եզուիտների եկեղեցու մէջ պատարազին. ժողովուրդ չափազանց շատ կար: Ներկայ եղողները թուում ևս նկատեցի մարշալ Մակ-Մահօնին, դուքս Բրօլլին, Բիւլճէին և յետադիմութեան միւս աւաջտարդներին: Պատարազի ժամանակ եղած ընդհանուր արամադրութիւնը վկայում էր, որ եզուիտների մէջ մեծ շփոթ է տիրում: Իմ բոլոր ծանօթներից ամենից լաւ իրան պահում էր Հայր Մարտինոյ: Նա նոյն փիլիսոփայական կենտրոնացած հայեացքը և նոյն բարի ժպիտը ունէր: Եզուիտների սքստրիուս այսօր ամբողջ օր սպասում էին, առաւօտեան ժամի 4-ից մինչև երեկոյ: Պէտք է աւելացնել, որ դատարանների հրաժարական ստուղ անդամներին, մասնաւոր պրօկուրորների թիւր հետզհետէ աւելանում է:

ԲԵՐԼԻՆ, 17 յունիսի: Կոնֆերանցիայի

երէկվայ նիստի ժամանակ ի նկատի առնվեցաւ, որ նրա աշխատանքները գրեթէ վերջանում են և վճռվեցաւ նիստերի խիստ զարանապահութիւնը թիւրքացներ: Մինչև անգամ օրերումս սպասվում է թիւրք-յունական նոր սահմանների քարտէզի հրատարակելը: Կոնֆերանցիան հրաժարվեցաւ Սալիոսարաւանդից սահման անցկացնել այն նպատակով, որ յոյների և այբանջիների մէջ արեւնահեղ կռիւներ չը պատահեն: Սարբի միջով սահմանները անցկացնելու ժամանակ կոնֆերանցիան ի նկատի առաւ սարատեղիական պայմանները և հրաժարվեցաւ այնպիսի սահման որոշել, որ պատերազմական կէտից նայելով, մի կողմից միւսի վրա առաւելութիւն չը տար: Առում են որ երկրորդական հարցերի վերաբերալ կարգադրութիւնները կոնֆերանցիայի պաշտօնական վճռի մէջ չեն մտնի: Այդ կարգադրութիւնները առանձնապէս կը հարցողեն յունաց և թիւրքաց կառավարութիւններին, որովհետեւ Բերլինի դաշնագրի 24-դ յօդուածի վրա հիմնված կոնֆերանցիայի իրաւունքները վերաբերում են միայն սահմանները որոշելու: Հարցին: Տեղական տեխնիկական մասնագործի և կոնֆերանցիայի վճիռները Կ. Պոլսի և Աթէնք հարցողելու ձեռք մասին կոնֆերանցիան երեւի ոչինչ վճիռ չի տայ: Այդ երկու հարցերն էլ պետութիւնները անմիջապէս իրանց մէջ կը վճռեն: Բօլքարական կառավարութիւնը հարցողեց Աւստրո-ունգարական մինիստրութեանը, որ բացի այն ա հոյններից, որոնց մէջ զինուորական նիւթեր են պահում, միւսները անյապաղ կը քանդվեն: Աւստրո-ունգարական կառավարութեան կողմից Բուփնիային տուած հարցին Արաբ-տարիայի մասին Բուփնիական կառավարութիւնը պատասխանել է, որ Բօլքարիայի երկրի մի կտորի զիջելը և Սիրիտարիայի մօտ կամուրջի կառուցանելը երեւակայական է դարձնում, բայց այնու ամենայնիւ Բուփնիան կրաւորականապէս կենթարկի Բերլինի դաշնագրի ստորագրող պետութիւնների վճռին:

Ս. ՊԵՏԵՐՅՈՒՐԳ, 18 յունիսի: Այսօր ուղեւորվում է Կրօնշտապից կամաւոր կրէյսեր Ռուսաստան: Նա տանում է իր հետ զինուորական և Կարմիր խաչին պատկանող աւարկաններ և Վլադիվաստօկ ուղարկող միւս կողմ երկու նաւեր: Կրէյսերի վրա կան 76 առաջին և երկրորդ կարգի և 1200 երրորդ կարգի ճանապարհորդներ: Ռուսաստան կրէյսերը բարձրացրեց զինուորական դրօշակը: Նա կը մտնի Կապաչ իր Օդոստափառ Հովանաւոր ծովային մինիստրութեան կառավարչին բարեկեց: Մեծ ովկիանոսի զինուորական նաւերի հրամանատար Լէսօսիկի յունիսի 25-ից յետոյ կուղևորվի Սոչեսա, Կ. Պոլս, Կայր և այնտեղ կը նստի Յուրպա կրէյսերի վրա, որ չինական ջրերն է գնում: ՓԱՐԻՉ, 18 յունիսի: Փարիզում և նահանգներում եզուիտները ամեն տեղ թողին իրանց հիմնարկութիւնները, յայտնելով, որ նրանք ոյժին են հնազանդվում: Մեծ անկարգութիւններ չը կային:

Ս. ՊԵՏԵՐՅՈՒՐԳ, 18 յունիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 62 կ., երկրորդ 92 ր., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 223 ր. 75 կ., երկրորդ 224 ր. 25 կ., արեւելան առաջին փոխառութեան տոմսակը 92 ր., երկրորդ 91 ր. 75 կ., երրորդ 91 ր. 34 կ.: Ռուսաց 1 բուրլ Լօնդօնի վրա արժէ 25.59 պէնս, ռուսաց 100 բուրլ Համբուրգի վրա 219 մարկ, Փարիզի վրա 269 Ֆր.: Բօրայի տրամադրութիւնը հանդիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՆԳՆԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախում են օլեոգրաֆիական պատկերներ 20% զիջումով...

16—20

ՓՈՐՁԱՌՈՒ ԼԱՇԻՊԱԿ

Որ նորերում է եկել, ցանկանում է տեղ ունենալ: Համաձայն է նորիցև անցած տարիներից...

6—10

Համեմատեցե՛ք անդրիական խանութի թէ՛յն գնով 1 ռ. 10 կ., 1 ռ. 20 կ., 1 ռ. 40 կ., 1 ռ. 60 կ., 1 ռ. 80 կ. ֆունտի համար այն թէ՛յնը հետ, որոնք ուրիշ խանութներում 30% օժիթանոց են ծախվում...

17—100

ՄԵԿ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ գիտե հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն լեզուներ, կամենում է ԿՇՆՏՈՐԸՉԻԿԻ ԳՈՐԾԱՆԿԱՆՍՐԻ կամ թարգմանի տեղ ունենալ: Զանկացողները կարող են դիմել «Մշակի» խմբագրութեանը:

Յունիսի 10-ից ամառային պարապմունքների համար ընդունում են աշակերտներ: Հասցէն հետևեալն է. Էլեմենտարная школа, Вельяминовская улица, д. Амагуни.

ՀԱԳՈՒՍՏՆԵՐ Երևանների 4 ռ., տղամարդկերանց 9—20 ռ., ամբողջ հագուստը, պիշակ 5 ռ., ՈՐՏԵՂ Ե ՍԱԽՈՒՄ: ԱՆԳՆԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ: Բամազէյ, պարուսին, տրիկո, դրապ, փոսի թուղթ, թաւիշ կարասիքի և կառքերի համար, կալիսկոր և այլն 25% օժիթանոց են ծախվում: ԱՆԳՆԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ համեղ մուրաբաներ, կծու Ֆետաներ հազել զէմ, պահիր, մազնեղիա, ամաններ, կարթուսան փոշի, սապոն, պարսկական փոշի և այլն: Այս բոլորը և ուրիշ շատ սարքանքներ կարել է գտնել ԱՄԵՆԱԿԱՆ ԳՆՆԵՐՈՎ ԱՆԳՆԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ:

17—20

ՇՈՒԿՈՒՄ ԵՆ ԿԱԿԱՍ Ֆրէյ և որդի, որոնք Փարիզի աշխարհահռչակի ժամանակ ունեցել են 1000 ստացան, վերջապէս ստացվեցաւ ԱՆԳՆԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ: Նոյն տեղ դարձեալ ստացվեցաւ Քիթ մեծ քանակութեամբ: Շատ պատուական թէ՛յն ֆունտը 1 ռ. 20 կ., և 1 ռ. 40 կ.

10—10

Շուտով մամուլի տակից լոյս կը տեսնեն Պետերբուրգի ֆրեորիական ընկերութեան հետեւեալ հրատարակութիւնների հայերէն թարգմանութիւնները:

1. Լակի դէր ՎԵՐՐՈՐԿ ՈՍԿԻ: II. Ազինարիւսի ձեռք է: ԽՍՈՒՄ ՍԵՆՏԱԿՆ: III. ՍՄԻՐՆՈՎԻ «ՆՈՐԱՐԱՐՆԵՐ»: Գորանցից մէկը արդէն մամուլի տակ է:

ԲԵԱՍԿԱՆ զարդի 6-դ դասաւան ԱՇԱԿԵՐՏ ցանկանում է մամուլը ԳԱՍԵՐ ունենալ և ՊԱՏՄԱՍԵՆԻ Երևաններին այդ զարդի ՋԱՆԱԶԱՆ ԳԱՍՏԱՌՆԵՐԻ համար: Հասցէն «Մշակի» խմբագրութեանը:

2—2 (2)

Թիֆլիսի ընկերութեան հայերէն զբերի հրատարակութեան Վարչութիւնը պատիւ ունի յայտնել, որ արդէն դուրս եկան մամուլի տակից և ծախվում են Թիֆլիսի բոլոր զրաւաձանների մօտ ընկերութեան տպագրութիւնները:

№ 4 ԲԻՉԵՐ-ՍՏՈՒ. ԹՈՎԱՍՍ ԵՂՔՈՐ ՏԵՍԿԸ, փոխ. երևանների համար Պալմեր, թարգ. օր. Ն. Տէր-Մարտիոսանի: Պատկերազարդ և կազմած—60 կ.:

№ 5 ՄՈՐԵՆԻ ԵՆ ՆՈՐԱՆ ԶՆՁՆՈՒ ՀՆԱՐՆԵՐԸ, աշխ. Տէր-Բարսեղանցի: Գինն է 10 կոպէկ:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցէով ВЪ Тифлисъ, Тифлисское Общество изданія армянскихъ книгъ.

ԲԺՇԿԱՆՈՅ

ՀԻՒՆԳՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՈՏԵԱՆ 9-18 ՄԻՆՁԵՆ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Գալբոն սկի կանանց հիւանդ. Գորալե վիլէ ներքին հ. Բօտինեանց կանանց և երևանների հ. Բիւլէաբեանց խիրուրգիական և աչքերի հ. Շտեմբորսկի վիներական և կաշու հ. Բարայեան ջրային և հողկան հ.:

Երեքշաբթի. Մինկե վիլէ խիրուրգիական հ. Վզօրօ վիներական և բողազի հ. Բէյլի աչքի հ. Բախուտով մանկաբարձական, կանանց և երևանների հ. Կրասնօզլեա զօժ. Լիսիցե վ և Վերմիշե վ ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցե վ և Բուրջօ վ սկի ներքին հ. Շտեմբորսկի կիներական և կաշու հ. Աստուածատուրօ վ կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վզօրօ վիներական և բողազի հ. Բօտինեանց կանանց և երևանների հ. Լիսիցե վ և Վերմիշե վ ներքին հ. Բիւլէաբեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Գալբոն սկի կանանց հ. Մինկե վիլէ խիրուրգիական հ. Կրասնօզլեա զօժ և Լիսիցե վ ներքին հ. Բախուտով մանկաբարձական, կանանց և երևանների հ. Շտեմբորսկի և Աստուածատուրօ վիներական և կաշու հ. Բարայե վ ջրային և ներքին հ.:

Շաբաթ Լիսիցե վ և Վերմիշե վ ներքին հ. Բարօ վ կուրծքի հ. Սանկօ վ սկի վիներական և կաշու հ.:

Բացի այդ բժշկ Վզօրօ վ բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյան 4—6 ժամը:

Բժիշկ Բարայե վ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրական բժշկութեան և ներքին հ. համար: Բնակարանը գտնվում է Սերգիեւկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Ատամնաբոյժ Օբրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում ընդունում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտօր Լիսիցե վ:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԳԼԽԱՌՈՐ ՊՈԼՏԵՍ Ի Ի Լ Ի Ի Է Ե Ն Բ Ի Խ Յ Ի Մ Ե Ր Մ Ա Ն Ի, Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, ԲՈՒՇԱՅԱ ՄՈՐԱԿԱՅԱ, № 42

Առաջարկվում են արտասանման ամենալավ գործարանների նորերում ստացված երաժշտական գործիքներ:

ՋՈՒՌԱԿՆԵՐ 2 1/2 ռ., 5 ռ., 6 ռ., 8 ռ., 12 ռ., 20 ռ., 30 ռ., 50 ռ., 60 ռ. և աւելի թանց մինչև 150 ռ., ԿՆՏՆՈՅՆԵՐ (СМЕЧКЕ) 50 կ., 1 1/2 ռ., 2 ռ., 3 ռ., 5 ռ., 8 ռ., և աւելի թանց մինչև 25 ռ., ԱՐԿՂՆԵՐ 2 1/2 ռ., 5 1/2 ռ., 6 ռ., 7 ռ., 10 ռ., և աւելի թանց մինչև 20 ռ., 2ին խաղաղան և գերմանական ջութակներ մինչև 600 ռ.: ՋՈՒՌԱԿՆԵՐ փոքր դիրքի երևանների համար 2 ռ. 50 կ. մինչև 30 ռ.: Ջութակի չօրա (ինքնուսուցիչ) 2 ռ., 3 ռ., 4 ռ., 5 ռ.: ԱՆՏԵՐ 9 ռ., 15 ռ., 25 ռ., 50 ռ. և աւելի թանց: ՎԻՈՒՅՆԵԼՆԵՐ 20 ռ., 30 ռ., 40 ռ., 60 ռ., 100 ռ. և աւելի թանց մինչև 600 ռ.: ՎՍՅՈՅՆԵԼԻ չօրա 4 ռ.: ԿՈՆՏՐԱՍ 45 ռ., 65 ռ., 120 ռ. և աւելի թանց: ԳԻՏԱՐ 3 ռ., 50 կ., 5 ռ., 10 ռ., 15 ռ., 20 ռ., 40 ռ., 50 ռ. և աւելի թանց մինչև 100 ռ.: Գիտարի չօրա (ինքնուսուցիչ) 1 ռ. 50 կ., 2 ռ., 3 ռ.: ՅԻՏԱՆԵՐ 14 ռ., 16 ռ., 25 ռ., 35 ռ., 50 ռ. և աւելի թանց մինչև 100 ռ.: Յիտարի չօրա 2 ռ., 3 ռ. 50 կ., նոտաներ 40 կ., 60 կ., 90 կ. իւրաքանչիւր տեղաւոր: ՍԱՆԿՈՒՆ 10 ռ., 20 ռ., 30 ռ., 40 ռ., և աւելի թանց. չօրա 3 ռ.: Ամենալավ իտալական ԼԱՐԵՐ այդ գործիքների համար, ԿԱՄԵՐՏՈՆ 40 կ., 50 կ., 1 ռ., 50 կ., 2 ռ., 3 ռ., 6 ռ.: Սուրդին կանիֆօլ և այլ պատկանելիք: ՄԵՏՐՈՆՈՒՄ 8 ռ., 12 ռ.: Երկաթի ծալիչ ՊԻՊԵՏՆԵՐ 5 ռ.: Երկաթի ծալիչ պր.պետներ մոմակներով 6 ռ., 8 ռ.: Գերմանական ԳԱՐՄՈՆԵՐ 4 ռ., 4 ռ. 50 կ., 5 ռ. 50 կ., 7 ռ. 50 կ., 10 ռ., 15 ռ., 20 ռ., 24 ռ., 30 ռ., 40 ռ., և աւելի թանց: Գարմոնայի չօրա և նոտաներ 50 կ., 75 կ., 1 ռ., 1 ռ. 50 կ., իւրաքանչիւր տեղաւոր: ԿՈՐՆԱՊԻԱ-ՊԻՍԱՆ 18 ռ., 25 ռ., 30 ռ., 40 ռ., 60 ռ. և աւելի թանց մինչև 100 ռ.: Եհօլա (ինքնուսուցիչ) 1 ռ. 50 կ., 4 ռ., 5 ռ.: ԱՆՏՈՐԵ, ՆՆԱՆՓՈՂԵՐ, ՏՐՈՒՐՈՆՆԵՐ, ՖԼԵՅՏԱՆԵՐ 3 ռ., 5 ռ., 7 ռ., 10 ռ., 12 ռ., 20 ռ., 30 ռ., 40 ռ., 60 ռ. և աւելի թանց: Եհօլա (ինքնուսուցիչ) 1 1/2 ռ., և 3 ռ., նոտաներ 40 կ., 1 1/2 ռ., 3 ռ. իւրաքանչիւր տեղաւոր: ԿԼԱՐՆԵՏՆԵՐ 6 ռ., 8 ռ., 10 ռ., 15 ռ., 20 ռ., 30 ռ., 40 ռ., և թանց մինչև 60 ռ.: Կարնետի չօրա 4 ռ., Բեկոն, Չականի, Չափօլտաներ: Անդրիական ԿՈՆՏՐԱՍԻՆՈ 30 ռ., 38 ռ., 45 ռ., 55 ռ., 100 ռ., 70 ռ., և թանց մինչև 160 ռ.: Եհօլա 3 ռ., նոտաներ 50 կ., 75 կ., 1 ռ., 1 1/2 ռ., Գերմանական կոնցերտինօ 3 ռ., 4 ռ., 5 ռ., 8 ռ., 10 ռ., 12 ռ., 15 ռ., և թանց մինչև 30 ռ.: Եհօլա (ինքնուսուցիչ) 75 կ., նոտաներ 40 կ., և 1 ռ. իւրաքանչիւր տեղաւոր երաժշտական արկիներ 2 ռ., 4 ռ., 6 ռ., 10 ռ., 25 ռ., 30 ռ., 40 ռ., 55 ռ., 75 ռ., 90 ռ., և թանց մինչև 200 ռ.: ՖԻՍԿԱՐՄՈՆԵՐ 90 ռ., 100 ռ., 120 ռ., 150 ռ., 175 ռ., 250 ռ. և աւելի թանց: ԳԱՐՄՈՆԵՐ ՖԼԵՅՏԻ 40 ռ., 45 ռ., 60 ռ., 75 ռ., 90 ռ.: ԳԱՐՄՈՆԵՐ Ֆլուտի ՕՐԳԱՆՈՎ 175. և 225 ռ.: ՇԱՐՄԱՆԿԱ 8 ռ., 12 ռ., 20 ռ., 30 ռ., 40 ռ.: Խաղաղան չարմանկաներ 150 ռ., 200 ռ., 250 ռ.: ՕՐԳԱՆՆԵՐ Թաշմենի համար 10 ռ., 15 ռ.: Թորոնիներ, իտալիներ, բուլղարիներ, բանդօնիստ, մետաղական չիթունների բեկաներ, եսանկիներ, դարմոններ և այլն:

Օտար քաղաքներից ստացված պատուէրները կատարվում են անյապաղ և ճշգրիտեամբ: Հանապարճաձայնը գնողին է: Կախվում են հատով և մեծ քանակութեամբ:

1—1

На Воронцовской Набережной, въ домѣ Г-жи Варламовой отдается въ наемъ квартира о 5 комнатахъ, съ кухней, большою конюшнею и сараемъ. Объя условияхъ спросить въ Тифлисской Городской Управѣ.

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ցանկանում է այս ամառվայ արձակուրդներին ընտանիքի հետ ամառանոց գնալ ուսուցչի պաշտօնով: Կարող է պատրաստել երևաններին բոլոր ծխական և միջնակարգ ուսումնարանների առաջին և երկրորդ դասաւանց համար, (բացի դասական լեզուներից) կամ պարապել մանուկների հետ, և ուսուցանել հայոց և ուսուց լեզուներ թէ՛ աշակերտներին և թէ՛ չափահասներին: Նմանապէս կարող է ցանկացողներին ուսուցանել և վրաց լեզուն:

Հասցէն կարել է իմանալ «Մշակի» խմբագրութեանը. ցանկացողներին խնդրում եմ վաղօրօք յայտնել իւրեանց պահանջը:

5—5

ՎԵՐՁՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄ Ներքիններ, թիֆլիսներ, դանակներ, զրիչներ, անուշահոտութիւններ, սապոն, գուլպաներ, թաշկինակներ և այլն, ԱՆԳՆԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ:

8—20

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Ջաք. Գրիգորեանցի Վոլգայի քաղաքում փառաւանդում Ընդհանուր աշխարհագրութիւն, Ա. տարի, Նախագիտելիք (հայրենագիտութիւն Թիֆլիսի) 5 պատկերներով: Աշխատատիրութիւն Ն. Միմենեանց: Գինն է 35 կոպ. գումարով առնողներին 20% զիջում կը լինի:

Մամուլի տակ են, Ընդ. Աշխ. Բ. տարի, մասն ուսումնական (մատենադասական) և Բնական և ընդ. Աշխ. Գ. տարի, մասն քաղաքական: Վերջին երկու գրքերի տպագրութիւնը աւարտելուց յետոյ կը հրատարակուեն նոցա գները: Օտար քաղաքացիք դիմում են:

Въ Тифлисъ. Кавказская книжная торговля З. П. Грикурова.

9—20

Вишелъ изъ печати и поступилъ въ продажу VI томъ „Сборника свѣдѣній о Кавказѣ“, изданія Кавказскаго Статистическаго Комитета, содержащій въ себѣ:

«Тифлисъ по однодневной переписи 25-го марта 1876 г.»

всего 570 страницъ in 4, съ 19-ю приложениями, а именно:

- 1) 15 литографированныхъ раскрашенныхъ графическихъ таблицъ;
- 2) 2 вида Тифлиса: по Шардену (1671 г.) и Турнефору (1701 г.);
- 3) копія съ плана Тифлиса по царевичу Вахуштѣ (1739 г.);
- 4) планъ современнаго Тифлиса.

Продажа производится въ книжныхъ магазинахъ: Беренштама, Кавказской книжной торговлѣ и Центральной книжной торговлѣ. Цѣна 4 руб. сер.; на пересылку прилагается за 5 фунт.